ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-28/2024/ՎԱՅՈՑՁՈՐ

ք. Երևան «13» 06 2024 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **գրավոր և բանավոր թարգմանությունների ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցներ և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **10 000 000 (տաս միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Բացառել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելն այն աշխատակիցների կողմից, ովքեր չունեն պետական գաղտնիքին առնչվելու համապատասխան ձևի թույլտվություն, իսկ թույլտվություն ունենալու դեպքում պետական գաղտնիք պարունակող

տեղեկություններին այն ծավալով, որը թույլ կտա կատարել իրենց աշխատանքային պարտավորությունները:

7.13 Չտարածել համատեղ աշխատանքի ընթացքում հայտնի դարձած պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ինչն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

5.14 Պետական գաղտնիքին առնչվելու իրավունքի դադարեցումը չի ազատում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները չտարածելու վերաբերյալ պարտավորությունից:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3
ՀՀ Ֆինանսների նախարարության	բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 163288639103
Հ/Հ 900011042471	ՀՎՀՀ 01006813
ՀՎՀՀ 02882913	Հեռ: /+37410/ 50-60-00,
Հեռ. 010 59-68-57	ԲՋՋ. /+37491/ 70-75-85, /+37477/ 70-99-66
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	Էլ. Փոստ՝ artconsulting@mail.ru
Ա. Ֆիդանյան	Ա. Խաչատրյան
/ ՀՀ ԵԳՆ Գլխավոր քարտուղար /	/նախագահ/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3 րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«13» 06 2024թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-28/2024/ՎԱՅՈՅՁՈՐ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով ախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	Բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում 79541100/508	Ծառայություններ մատուցողը պարտավոր է **1.** Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման փուլում (ինչպես նաև դեպքի վայրում) կամ Պատվիատուի կողմից այլ բնույթի թարգմանչական ծառայության կարիքի դեպքում բանավոր թարգմանչական ծառայություն մատուցելու նպատակով առավելագույնը 1 ժամվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման կանչով /հեռախոսազանգով կամ էլ. Փոստի միջոցով ներկայանալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանում: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2051-րդ հոդվածի 1-ին մասի՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ մեկուկես ժամից ավելի: Նույն օրենսգրքի 2-րդ մասի համաձայն՝ հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել	դրամ	7 000 000	1	Վայոց ձորի մարզ	Ֆինանսական միջոցները նախատեսելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիրը կնքելուց 20 օր հետո մինչև 25.12.2024թ.

		ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ չորս ժամը: **2.** Ապահովել թարգմանչական ծառայություն մատուցող մասնագետների 24 ժամյա հասանելիությունը՝ (աշխատել 24 ժամ, 7 օր ռեժիմով, առանց բացառության հանգստյան և տոնական օրերի): Թարգմանչական ծառայության կարիքի ընթացքում (անհրաժեշտության դեպքում), լսողական խնդիրներ ունեցող և համր մարդկանց համար ապահովել սուրդոթարգմանչի /ժեստերի լեզվին տիրապետող/ և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձանց օգնականի ծառայություններ մատուցող մասնագետների ներկայությունը: **3.** Եթե Պատվիրատուն իր թարգմանչական ծառայությունների շրջանակում ունի որոշակի ընդունված տերմինաբանություն, ապա Կատարողը պարտավոր է թարգմանությունն իրականացնել պահանջվող տերմինաբանության առանձնահատկություններով: **4.** Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը ծառայությունը պետք է մատուցի ՀՀ Վայոց ձորի մարզի ողջ տարածքում: **5.** Թարգմանչական ծառայությունների մատուցման շրջանակներում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից վճարվելու է բացառապես թարգմանության հետ կապված ծախսերը (թարգմանչի ճանապարհածախս կամ թարգմանչի համար առաջացած այլ ծախսեր չեն վճարվելու): **6.** Բանավոր թարգմանչական Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ կառավարության 22.11.2018 թվականի «Պետական միջոցների հաշվին					

		թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» թիվ 1334-Ն որոշման հավելված 2-ի և ՀՀ կառավարության 20.12.2018 թվականի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» թիվ 1509-Ն որոշման պահանջների համաձայն, **ինչպես նաև մասնակիցների առաջարկված միավոր գները /գները ըստ լեզուների 1 ժամվա համար/ չեն կարող գերազանցել ՀՀ կառավարության 22.11.2018 թվականի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» թիվ 1334-Ն որոշման հավելված 2-ի կետ 3-ով սահմանված աղյուսակի գներից /Տես ստորև՝ Հավելված 1.1/:** Ծանոթություն. Հաղթող ճանաչված կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում շրջանառվող պետական գաղտնիք կազմող տեղեկություններին կարող է ծանոթանալ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան թույլտվության իրավունք ստանալուց հետո, իսկ ոստիկանության համապատասխան ծառայողները (աշխատակիցները) մինչև պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը պարտավոր են համոզվել, որ դրանք ընդունող					

		կազմակերպությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, գաղտնիության համապատասխան աստիճանի տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու, իսկ ֆիզիկական անձինք՝ դրանց առնչվելու համապատասխան թույլտվության իրավունք ունեն:					
		Ընտրված մասնակցի համար՝ Պատասխանատու ստորաբաժանման առաջարկությամբ, ՀՀ ՆԳՆ-ն միջնորդություն կներկայացնի ՀՀ ԱԱԾ՝ պետական գաղտնիքին առընչվելու համապատասխան թույլտվության իրավունք ստանալու համար, իսկ ընտրված մասնակիցը պարտավոր է ապահովել թույլտվությունը ստանալու համար անհրաժեշտ պայմանները:					
2	Գրավոր թարգմանչական ծառայությունների մատուցում 79531100/515	Ծառայություններ մատուցողը պարտավոր է **1.** Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման փուլում (ինչպես նաև դեպքի վայրում) կամ Պատվիատուի կողմից այլ բնույթի թարգմանչական ծառայության կարիքի դեպքում գրավոր թարգմանչական ծառայություն մատուցելու նպատակով առավելագույնը 1 ժամվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման կանչով /հեռախոսազանգով կամ էլ. Փոստի միջոցով/ ներկայանալ Պատվիատուի կողմից նշված հասցեով կամ՝ Օտար լեզվով դիմում կամ գրություն ստանալիս (մինչև 20 էջ), եթե դրանք պետական գաղտնիք կազմող տեղեկություններ չեն պարունակում առավելագույնը 1-օրյա ժամկետում կատարել թարգմանությունը (թարգմանության վայրը կարող է ընտրել թարգմանիչը): Օտար լեզվով դիմում կամ	դրամ	3 000 000	1	Վայոց ձորի մարզ	Ֆինանսական միջոցները նախատեսելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիրը կնքելուց 20 օր հետո մինչև 25.12.2024թ.

		գրություն ստանալիս (մինչև 20 էջ), եթե դրանք պարունակում են պետական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ առավելագույնը 2-օրյա ժամկետում կատարել թարգմանությունը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում: Օտար լեզվով դիմում կամ գրություն ստանալիս (20-30 էջի դեպքում), եթե դրանք պետական գաղտնիք կազմող տեղեկություններ չեն պարունակում, առավելագույնը 2-օրյա ժամկետում կատարել թարգմանությունը (թագմանության վայրը ընտրում է թարգմանիչը): Օտար լեզվով դիմում կամ գրություն ստանալիս (20-30 էջի դեպքում), եթե դրանք պարունակում են պետական գաղտնիք կազմող տեղեկություններ՝ առավելագույնը 3-օրյա ժամկետում կատարել թարգմանությունը՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում, իսկ 30 և ավել էջերի դեպքում, եթե դրանք պարունակում են ինչպես պետական գաղտնիք կազմող, այնպես էլ ոչ գաղտնի տեղեկություններ՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում կատարել պահանջվող թարգմանությունը (ոչ գաղտնին՝ թարգմանչի նախընտրած վայրում, պետական գաղտնիք կազմող տեղեկությունների դեպքում՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում): Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է էլեկտրոնային և /կամ/ թղթային տարբերակով: Կատարողը՝ թարգմանված նյութը Պատվիրատուին հանձնում է էլեկտրոնային և թղթային տարբերակներով: 2. Ապահովել թարգմանչական ծառայություն մատուցող մասնագետների 24 ժամյա հասանելիությունը՝ (աշխատել 24 ժամ, 7 օր ռեժիմով, առանց բացառության հանգստյան և տոնական օրերի):					

		3. Եթե Պատվիրատուն իր թարգմանչական ծառայությունների շրջանակում ունի որոշակի ընդունված տերմինաբանություն, ապա Կատարողը պարտավոր է թարգմանությունն իրականացնել պահանջվող տերմինաբանության առանձնահատկություններով:					
		6. Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը ծառայությունը պետք է մատուցի ՀՀ Վայոց ձորի մարզի ողջ տարածքում: 7. Թարգմանչական ծառայությունների մատուցման շրջանակներում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից վճարվելու է բացառապես թարգմանության հետ կապված ծախսերը (թարգմանչի ճանապարհածախս կամ թարգմանչի համար առաջացած այլ ծախսեր չեն վճարվելու): 8. Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների: Թարգմանված նյութը ներկայացվում է A-4 ֆորմատով, տառաչափը՝ 12, միջտողային միջակայքը՝ 1.5, էջերի լուսանցքները՝ վերևից և ներքևից 20 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ: 9. Գրավոր թարգմանչական Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ կառավարության 22.11.2018 թվականի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» թիվ 1334-Ն որոշման հավելված 2-ի և ՀՀ կառավարության 20.12.2018 թվականի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» թիվ 1509-Ն որոշման					

		պահանջների համաձայն, **ինչպես նաև մասնակիցների առաջարկված միավոր գները /գները ըստ լեզուների 1 թարգմանչական էջի համար/ չեն կարող գերազանցել ՀՀ կառավարության 22.11.2018 թվականի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» թիվ 1334-Ն որոշման հավելված 2-ի կետ 3-ով սահմանված աղյուսակի գներից/Տես ստորև՝ Հավելված 1.2/:** Ծանոթություն. Հաղթող ճանաչված կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում շրջանառվող պետական գաղտնիք կազմող տեղեկություններին կարող է ծանոթանալ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան թույլտվության իրավունք ստանալուց հետո, իսկ ոստիկանության համապատասխան ծառայողները (աշխատակիցները) մինչև պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը պարտավոր են համոզվել, որ դրանք ընդունող կազմակերպությունները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, գաղտնիության համապատասխան աստիճանի տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու, իսկ ֆիզիկական անձինք՝ դրանց առնչվելու համապատասխան թույլտվության իրավունք ունեն:					

		Ընտրված մասնակցի համար՝ Պատասխանատու ստորաբաժանման առաջարկությամբ, ՀՀ ՆԳՆ-ն միջնորդություն կներկայացնի ՀՀ ԱԱԾ՝ պետական գաղտնիքին առընչվելու համապատասխան թույլտվության իրավունք ստանալու համար, իսկ ընտրված մասնակիցը					
		պարտավոր է ապահովել թույլտվությունը ստանալու համար անհրաժեշտ պայմանները:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-68-57
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am
Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3
բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813
Հեռ: /+37410/ 50-60-00,
բջջ. /+37491/ 70-75-85, /+37477/ 70-99-66
Էլ. Փոստ: artconsulting@mail.ru
Ա. Խաչատրյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1.1

Բանավոր Թարգմանչական ծառայությունը	Բանավոր /վարձատրության չափ (1 ժամ)
թարգմանություն՝ *հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն*	7000
թարգմանություն՝ *հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն*	8000
թարգմանություն՝ *հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն*	7000
թարգմանություն՝ *հայերենից հունարեն, հունարենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն*	7000
թարգմանություն՝ *հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն*	9000
թարգմանություն՝ *հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն*	8000
թարգմանություն՝ *հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից չինարեն, չինարենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն*	5000

թարգմանություն՝ *հայերենից հոլանդերեն, հոլանդերենից հայերեն*	6000
թարգմանություն՝ *հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն*	10000
թարգմանություն՝ *հայերենից ճապոներեն, ճապոներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ռումիներեն, ռումիներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից սերբերեն, սերբերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *սլովեներենից հայերեն, հայերենից սլովեներեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ուկրաիներեն, ուկրաիներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից փանջաբի, փանջաբիից հայերեն*	4000
թարգմանություն՝ հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	10000
թարգմանություն՝ *հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից լիտվերեն, լիտվերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ուրդու, ուրդուից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն*	4000
սուրդո թարգմանություն՝ *խուլ ու համրերի համար*	12000
Թարգմանություն՝ *հայերենից սույն կարգով չսահմանված լեզուներ, սույն կարգով չսահմանված լեզուներից հայերեն*	18000
ԸՆԴՀԱՆՈՒՐ	231000

Հավելված 1.2

Գրավոր Թարգմանչական ծառայությունը	Գրավոր /վարձատրության չափ (1 թարգմանչական էջ)
թարգմանություն՝ *հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն*	3000
թարգմանություն՝ *հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն*	4000
թարգմանություն՝ *հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն*	2500
թարգմանություն՝ *հայերենից հունարեն, հունարենից հայերեն*	8000
թարգմանություն՝ *հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն*	3000
թարգմանություն՝ *հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն*	5500
թարգմանություն՝ *հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն*	7500
թարգմանություն՝ *հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն*	5500
թարգմանություն՝ *հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն*	3000
թարգմանություն՝ *հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից չինարեն, չինարենից հայերեն*	14000
թարգմանություն՝ *հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն*	10000
թարգմանություն՝ *հայերենից հոլանդերեն, հոլանդերենից հայերեն*	12000
թարգմանություն՝ *հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն*	6500
թարգմանություն՝ *հայերենից ճապոներեն, ճապոներենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից ռումիներեն, ռումիներենից հայերեն*	6000
թարգմանություն՝ *հայերենից սերբերեն, սերբերենից հայերեն*	5000

թարգմանություն՝ *հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *սլովեներենից հայերեն, հայերենից սլովեներեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից ուկրաիներեն, ուկրաիներենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից փանջաբի, փանջաբիից հայերեն*	5000
թարգմանություն՝ հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	9500
թարգմանություն՝ *հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից լիտվերեն, լիտվերենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից ուրդու, ուրդուից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն*	5000
թարգմանություն՝ *հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն*	5000
Թարգմանություն՝ *հայերենից սույն կարգով չսահմանված լեզուներ, սույն կարգով չսահմանված լեզուներից հայերեն*	18000
ԸՆԴՀԱՆՈՒՐ	195 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-68-57
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3
բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813
Հեռ: /+37410/ 50-60-00,
ԲՋՋ. /+37491/ 70-75-85, /+37477/ 70-99-66
Էլ. Փոստ: artconsulting@mail.ru

Ա. Նաչատրյան
տնօրեն
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« » 2024 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« » 2024 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն